# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ՆՈՐԱՊՍԱԿՆԵՐԻՆ

Փետրվարի 14-ին Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին տոնում է Տյառնընդառաջը՝ 40-օրյա Քրիստոսի ընծայումը տաճարին: Արդեն մի քանի տարի է, ինչ Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի բարձր տնօրինությամբ Տյառնընդառաջի տոնը հռչակվել է նաև որպես նորապսակների օրհնության օր:

## Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ՆՈՐԱՊՍԱԿՆԵՐԻՆ

Ամենայն Հայոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից՝ Տյառնընդառաջի լուսեղեն խորհրդով բացված տոնական այս օրը, հոգու բերկրանքով և Հայրական սիրով ու օրհնությամբ, ողջունում ենք ի Հայաստան և ի Սփյուռս բնակվող բոլոր նորապսակ Մեր զավակներին:

Այսօր դուք առաջին անգամ Տիրոջն ընդառաջ եք գնում երկուսով, իսկ ոմանք, Աստծո ողորմած կամքով, նաև իրենց առաջնեկի հետ՝ ուրախ, միասիրտ ու միակամ, հույսերով և իղձերով լեցուն: Եկեղեցում կանգնած՝ դուք էլ մի եկեղեցի եք, որ «առաջի Աստուծոյ և մարդկան» ուխտ եք կապել անխախտ միության՝ հիմնված սիրո և ինքնընծայման միշտ կենսունակ, միշտ օրհնյալ վեմի վրա:

Այո, ընտանիքը եկեղեցի է, որի հիմնարկեքը կատարվում է սուրբ պսակի խորհրդակատարությամբ, և աստվածային շնորհներով զորացյալ երիտասարդ զույգեր, որպես սպասավորներ այդ սրբազան տաճարի, կոչված են բարեպաշտությամբ և մանկտյաց քաղցր ճիչով ու երջանկությամբ զարդարելու ընտանեկան իրենց հարկը՝ Աստծո տնական եկեղեցին:

Աստվածասեր ու հավատավոր ձեր հոգիների ջերմությամբ ու սիրով ամուր՝պահպանեք ձեր ընտանիքը, որ հարատևության պայմանն է Հայկյան մեր ազգի, ամրությունը՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու և մեր պետության: Ձեր գուրգուրող ու հոգածու խնամքի ներքո՝ հավատով, Տիրոջ Սուրբ Ավետարանի պատգամներով ու հայրենյաց ավանդներով սնեք ու կրթեք ձեր զավակներին, որ դառնան օրհնությունը ձեր կյանքի և համայն մեր ժողովրդի:

Ի խորոց սրտի աղոթքով առ Աստված՝ հայցում ենք Տիրոջ հանապազ խնամքն ու պահպանությունը նորահաստատ բոլոր ընտանիքներին:

Թող ձեր համատեղ կյանքը միշտ լինի դեպի Տերը ընթացող օրհնյալ ճանապարհ, միշտ լինի Տյառնընդառաջ:

«...Գնացէ՛ք սիրով՝ որպէս եւ Քրիստոս սիրեաց զմեզ, եւ մատնեաց զանձն իւր վասն մեր, պատարագ եւ զենումն Աստուծոյ ի հոտ անուշից» (Եփես. Ե 2):

Օրհնությամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ**

**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**